

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

БИБЛИОГРАФИЯ
ПЕЧАТНЫХ ТРУДОВ
АКАДЕМИКА
ГАГИКА Х. САРКИСЯНА



ԵՐԵՎԱՆ


ЕРЕВАН

2006

Իմ գիտական կենսագրությունը մասամբ ոչ սովորական է, երկատված: Այն սկսվել է տակավին ուսանողական տարիներին Լենինգրադի էրմիտաժում, երբ իմ երկրորդ ուսուցիչը (առաջինը իմ հայրն էր)՝ մեզանում լավ հայտնի Իգոր Միխայիլի Դյակոնովը, ինձ հանձնարարեց մշակել, այսինքն՝ կարդալ, թարգմանել, մեկնաբանել և հրատարակել հելլենիստական դարաշրջանի Բաբելոնյան սեպագիր տախտակների էրմիտաժյան հավաքածուն: Հետագա ողջ կյանքում ասուրագիտությունից ես այլևս չեմ բաժանվել: Արտասահմանում հրատարակել եմ Բեռլինի առաջավորասիական թանգարանի համաբնույթ հավաքածուն ու հելլենիստական Բաբելոնի քաղաքին վերաբերող տասնյակ հոդվածներ, որոնք այստեղ՝ Հայաստանում, գործնականորեն ոչ ոքի հայտնի չեն:

Հայագիտություն մուտք եմ գործել արդեն ասպիրանտ եղած ժամանակ, բայց դարձյալ Հին Հայաստանի քաղաքին վերաբերող թեմայով, որը հետո վերաճեց նրա սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային պատմության: Ինձ ամբողջապես գրավեց Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

Գագիկ ՍԱՐԳՍՅԱՆ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

**БИБЛИОГРАФИЯ
ПЕЧАТНЫХ ТРУДОВ
АКАДЕМИКА
Г. Х. САРКИСЯНА**

К 80-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ УЧЕНОГО



ЕРЕВАН 2006

016 : 947.925 Ասքազյան

✓

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆԻ
ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

ԳԻՏՆԱԿԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՍՅԱԿԻ ԱՌԹԻՎ

A
II
91011



ԵՐԵՎԱՆ 2006

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 01:941(479.25)
ԳՄԴ 91.9:63+63.3(2Հ)
Ս 259

Տպագիր աշխատությունների ժամանակագրական ցանկը կազմել է
Ռ. Ա. ԲԱԲԱԶԱՆՅԱՆԸ

Խմբագրությունն ու ներածականը՝ Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ,
Պ. Ս. ՍՈՒՐԱԴՅԱՆԻ

Ս 259 ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱ-
ՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/.- Եր.: «Զանգակ-97», 2006.- 64 էջ:

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի 1998 թ. հրատարակած
«Գազիկ խորենի Սարգսյան» մատենագիտությունը վերահրատարակ-
վում է լրացումներով ու ամհրաժեշտ սրբագրումներով:

Ակադ. Գ. Սարգսյանի աշխատությունները հայագիտությանն ու
արևելագիտությանը բերին բազում խնդիրների առեղծումներ և նոր
պրպտումներ խթանելու մնայուն կարողություններ:

Ս $\frac{4406000000}{0003(01)-2006}$ 2006 թ.

ԳՄԴ 91.9:63+63.3(2Հ)

ISBN 99941-1-148-5

© ՀՀ ԳԱԱ ՍԻ, 2006 թ.

ԱԿԱԳԵՄԻԿՈՍ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը ծնվել է 1926թ. ապրիլի 6-ին Երևանում, ճանաչված գրականագետ պրոֆ. Խորեն Սարգսյանի ընտանիքում: Ավարտել է Երևանի Կրուպսկայայի (այժմ՝ Ն.Աղբալյանի) անվան հայկական միջնակարգ դպրոցը: 1946-1950 թթ. ուսանել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգի) պետական համալսարանի Պատմության ֆակուլտետում, մասնագիտանալով Հին պատմության ամբիոնում՝ անտիկ շրջանի պատմության գծով: Սովորել է հունարեն և լատիներեն լեզուները: Այստեղ նրա ուսուցիչներն են եղել ակադեմիկոս **Վ. Վ. Սարուվեն**, պրոֆեսորներ **Ս. Ի. Կովալյովը**, **Քս. Մ. Կոլոբովան**: Չուգահեռաբար հաճախել է նույն համալսարանի Արևելյան ֆակուլտետում սեպագրագիտական-ասորագիտական առարկաների և արքադերեն (ասորա-բաբելոներեն) և ուրարտերեն լեզուների դասընթացները, որոնք վարում էր խոշոր արևելագետ **Ի. Մ. Գյակոնովը**: Նրա ղեկավարությամբ է Գ.Սարգսյանը գրել նաև իր դիպլոմային աշխատանքը՝ Էրմիտաժում պահպանվող Սելևկյան շրջանի բաբելական սեպագիր չրնթերցված սալիկների ուսումնասիրության հիման վրա՝ «Հելլենիստական Բաբելոնիայի քաղաքը և տաճարը» վերնագրով: Այդ աշխատությունը և սալիկների համապատասխան հավաքածուն այնուհետև հրատարակել է «Вестник древней истории» հանդեսում (1952, 1953, 1955թթ.):

1951-1954թթ. Գ.Սարգսյանը սովորել է ԽՍՀՄ ԳԱ Պատմության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի ասպիրանտուրայում՝ պրոֆ. **Մ. Ե. Սերգեյենկոյի** ղեկավարությամբ: 1954թ. հաջողությամբ պաշտպանել է «Հին Հայաստանի քաղաքը» թեկնածուական ատենախոսությունը և վերադարձել Երևան, աշխատանքի անցել Պատմության ինստիտուտում որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող:

Գ.Սարգսյանի հետագա առաջընթացի նշանաձողերն են. Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի գիտնական քարտուղար (1956-1962), Պատմության ինստիտուտի փոխտնօրեն գիտության գծով (մինչև 1966թ.), իր

ստեղծած՝ հին պատմության բաժնի վարիչ (մինչև 1971թ.), Հայաստանի գիտությունների ակադեմիայի նորաստեղծ Արևելագիտության ինստիտուտի հիմնադիր տնօրեն (մինչև 1994թ.), նույն Ակադեմիայի փոխպրեզիդենտ (1988-1990թթ.), վերստին նույն Ակադեմիայի փոխպրեզիդենտ, հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1995-1998թթ.):

Գ.Ն.Սարգսյանը պատմական գիտությունների դոկտոր էր 1967թ., պրոֆեսորի կաշում ստացել էր 1981թ., 1974թ. ընտրվել Հայաստանի ակադեմիայի թղթակից-անդամ, 1986թ.՝ ակադեմիկոս:

Գ.Սարգսյանը ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի իր իսկ հիմնած սեպագրական քաղաքակրթությունների բաժնի վարիչն էր, նույն ինստիտուտի աստիճաններ շնորհող գիտական խորհրդի նախագահը, Պատմության, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Մաշտոցի անվան Մատենադարանի և այլ հաստատությունների գիտական խորհուրդների անդամ: Նա «Պատմա-քանասիրական հանդես», ինչպես նաև «Вестник древней истории» (Մոսկվա) հանդեսների խմբագրական հանձնաժողովների անդամ էր, «Հայաստան-Հունաստան» ընկերության նախագահ, Սիրիայի գիտության պատմության ընկերության պատվավոր անդամ: Ժամանակին եղել է ԽՍՀՄ Արևելագետների ընկերության Հայաստանի մասնաճյուղի նախագահ:

Գագիկ Սարգսյանի գիտական գործունեությունը սկզբից մինչև կենաց վերջին օրը ընթանում էր երկու ուղղությամբ՝ հայագիտության և սեպագրագիտության-ասուրագիտության: Հարկ է նշել, որ նրա ստեղծագործական խառնվածքին միշտ հատուկ է եղել պատմության կոնկրետ խնդիրները պատմական լայն համատեքստում դիտելու հատկությունը: Այդպիսի մոտեցումներն ի հայտ են եկել հայագիտության ասպարեզում նրա կատարած հենց առաջին քայլերից: Այսպես, Գ.Սարգսյանի հետաքրքրությունը հին Հայաստանի քաղաքի նկատմամբ անմիջականորեն կապված էր հելլենիստական դարաշրջանի հունական պոլիսների, ինչպես և Բաբելոնիայի՝ իր իսկ **հայտնաբերած «տանարա-քաղաքային համայնքի»** վերաբերյալ **նրա ուսումնասիրությունների հետ: Դրանց զուգահեռ դիտարկումն է. որ գիտնականին հնարավորություն է տվել արժեքավորելու արդյունքների՝ հին Հայաստանի քաղաքին վերաբերող չափազանց սուղ տեղեկությունները:**

“Тигранакерт. Из истории древнеармянских городских - общин” (Մոսկվա, 1960) իր առաջին մենագրության մեջ նրան հա-

ջողվել է ցույց տալ, որ հին Հայաստանի քաղաքները ներկայացրել են հելլենիստական դարաշրջանին հատուկ կիսահնքնավար քաղաքային համայնքների տարատեսակներից մեկը:

Նշված մենագրության մեջ արդեն արժանավորված է նաև հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի խնդիրը: Իր մի շարք հոդվածներում և «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին» (Երևան, 1962) մենագրությամբ նա փորձել է գտնել այդ վիճահարույց և դժվարագույն պրոբլեմի լուծումը, Հայաստանին հատկացնելով ժամանակի՝ աշխարհին հատուկ ստրկատիրական հասարակությունների համակարգում իր ուրույն տեղը, որը բնութագրվում է անտիկ՝ հունա-հռոմեական հասարակությունների հատուկ դասական ստրկությունից իր ունեցած մեծ տարբերություններով: Մասնավորապես դաստակերտ-ազարակների ուսումնասիրությանը նվիրված հոդվածներում (Երևան, 1962, Փարիզ, 1968) նա ցույց է տվել, որ հին Հայաստանի «մշակ» ստրուկների կարգավիճակը շատ մոտ է եղել ճորտականին:

Հին Հայաստանի քաղաքական պատմության բնագավառում Գ.-Սարգսյանի հետազոտությունների արդյունքները շարադրված են մի շարք հոդվածներում (Երևան, 1965, 1966, 1986, 1981), ինչպես և «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի առաջին հատորի՝ նրա գրչին պատկանող «Հայաստանը հելլենիստական դարաշրջանում» ծավալուն բաժնում (Երևան, 1971): Նրա մշակված հարցերից հատկապես պետք է նշել երեքը. Հունա-հռոմեական աղբյուրների բնագրային մանրակրկիտ քննությամբ նա կարողացել է հստակեցնել մ.թ.ա. 3-րդ դարի վերջի – 2-րդ դարի սկզբի Հայաստանի ծայրահեղ բարդ իրավիճակի մասին պատկերացումները, երբ Հայաստանը կազմող չորս թագավորությունները՝ Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ճովքի, ինչպես և Կոմմագենեի, որտեղ իշխում էին հայկական Երվանդական դինաստիայի շառավիղները, պայքար էին մղում Սելևկյանների դեմ իրենց անկախության համար: Գ.Սարգսյանը վեր է հանել այդ չորս պետությունների ճակատագրի համանմանությունն ու առանձնահատկությունները (Երևան, 1969):

Մյուսը դրան հաջորդած մ.թ.ա. 2-րդ դարի առաջին կեսի ժամանակաշրջանն է: Գ.Սարգսյանին հաջողվել է արձատարապես վերանայել և ի նորո լուսարանել այդ հետաքրքրազույն շրջանը և նրա «հեյոս» հայոց արքա Արտաշես I-ի գործունեությունը:

Արտաշես I-ը հանդես եկավ որպես խոշորագույն զորավար և հայոց պատմության բարեփոխիչ գործիչներից մեկը, որի օրոք Հայաս-

տանն ապրեց հողերի միավորման, միջազգային համարում ունեցող խոշոր պետության ստեղծման, երկրի տնտեսական և վարչական կյանքի կարգավորման, թագավորական իշխանության հեղինակությունից շեշտակի վերելքի, Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման և այլ պատմական գործընթացներ: Արտաշես 1-ի գործունեության այս նոր գնահատմամբ պարզվում են նաև նրա թոռան՝ Տիգրան Մեծի ունեցած հաջողությունների բուն ակունքները:

Երրորդ դրվագը հատկանշական է Սարգսյանի՝ որպես հայագետ-ասուրագետի համար: Նրան հաջողվել է լուծել Տիգրան Մեծի երեք որդիների, մեկը մյուսին հաջորդած, հոր դեմ ապստամբելու պատճառների հետ կապված առեղծվածը: Դրա համար նա ներգրավել է միանգամայն անսպասելի աղբյուր՝ հեռավոր Բաբելոնիայի հելլենիստական դարաշրջանի աստղաբաշխական-սեպագրական մի օրագրի՝ պատմական ժամանակագրություն պարունակող տվյալները, որոնցում հիշատակվում է Տիգրան Մեծի որդի Տիգրան կրտսերը: Դրանով բացվում է նաև հայ-բաբելոնական այդ ուշ շրջանի հարաբերություններից մի հետաքրքիր էջ (Երևան, 1991, Բեռլին, 1994):

Գ.Սարգսյանը նշանակալի վաստակ ունի նաև Հայաստանի օտարալեզու վիմագրական կոթողների՝ Արտաշես 1-նի արամեերեն և Գառնիի ու Տիգրանակերտի հունարեն արձանագրությունների հետազոտման գործում (Երևան, 1965, Մոսկվա, 1966, 1981):

Գիտնականի նախասիրությունների շրջանակում էր նաև հայոց մշակույթը, հատկապես նախաքրիստոնեական, նախամեսրոպյան հոգևոր մշակույթի, լեզվի պատմությունը: Այդպիսին են հին Հայաստանում հելլենիստական խոշոր տերությունների օրինակով իշխող թագավորի (նաև թագուհիների) և նրա նախնիների աստվածացման և պաշտամունքի (որ, իհարկե, ուներ նաև ազգագրական արմատներ) հայտնաբերմանն ու մանրամասն հետազոտությանը նվիրված նրա աշխատությունները՝ (Մոսկվա, 1960, 1966, Երևան, 1968):

Այնուհետև, ի մի հավաքելով անտիկ և հայկական աղբյուրների սուղ տվյալները, Գ.Սարգսյանին հաջողվել է վեր հանել Հայաստանի հողի վրա նախամեսրոպյան շրջանում գոյություն ունեցած **հունալեզու պատմագրության** մի ամբողջ շրթա, որը գրեթե անընդմեջ ձգվում է Տիգրան Մեծի օրերից մինչև 4-րդ դար՝ հայոց ոսկեդարի նախադուռը և, հողիմակի համոզմամբ, դարձել է 5-րդ դարում հայ ազգային պատմագրության սկզբնավորման և ծաղկման նախապայմաններից ու գործոններից մեկը (Երևան, 1969):

Գ.Սարգսյանը շահագրգռված էր նաև լեզվաբանության խնդիր-

ներով: Անդրադառնալով հայ մատենագրության ոսկեդարյան «պաթյունի» շատերին հետաքրքրող պատճառների ու նախադրյալների վիճահարույց խնդրին, նա առաջարկել է դրան նախորդող շրջանում հայ իրականության մեջ քրիստոնեական դավանանքի այլալեզու, այսինքն՝ հունարեն կամ ասորերեն գրավոր տեքստից անմիջականորեն բանավոր հայերենով (իր առաջարկած եզրի համաձայն՝ «հետերոէպիկ») քարոզման համակարգի գոյության տեսությունը: Քարոզի այդ տեսակը, որը գրեթե նույնական է «այլալեզվազրական» կոչվող եղանակի բովանդակության հետ, նրա կարծիքով, երկար ժամանակ սպասարկել է քարոզչության, ապա՝ եկեղեցու կարիքները և, մի կողմից, համապատասխան հայերեն տերմինաբանություն նախապատրաստելով, էապես հեշտացրել է ոսկեդարյան քարոզման իշխների գործը, բայց, մյուս կողմից, որոշ չափով խոչընդոտել է հայոց գրերի ստեղծմանը՝ Մաշտոցին նախորդած ժամանակաշրջանում (Երևան, 1978, Հայդերբերգ, 1993):

Հայ ժողովրդի կազմավորման և հայոց հին պետականության ձևավորման հարցերը նույնպես չեն շրջանցվել Գ.Մարգարյանի ուսումնասիրություններում: Հայագիտության այս կարևորագույն և, սակայն, առայժմ հստակ ձևակերպում չգտած խնդիրների մեկնաբանմանը նվիրված «Ուրարտական տերությունը և հայերը» հետազոտության մեջ (Երևան, 1988) նա, հստակ տարբերակելով ժողովրդի ծագումը նրա կազմավորումից, ջանացել է վերականգնել հայ ժողովրդի ազգաստեղծման գործընթացին մասնակից էքնիկական խմբերի տեղաշարժերի ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները, ըստ կարելույն պարզել դրանց պատմական համագործակցության բնույթը և կոնկրետ դրսևորումները: Մասնավորապես նա հաջող փորձ է արել լուսաբանելու հայկական ցեղերի՝ Հայկական լեռնաշխարհով մեկ տարածման բնույթն ու ընթացքն Ուրարտական տերության առաջացումից առաջ, նրա գոյության օրոք և նրա անկումից հետո, ընդհուպ մինչև հայ ժողովրդի կազմավորման ավարտը և առաջին համահայկական պետության ստեղծումը: Խնդրին վերաբերող դրույթների առավել հստակ ձևակերպումները կարելի է գտնել գիտնականի վերջին հրապարակման մեջ (1998թ.):

Մովսես Խորենացու պահպանած՝ Հայկի և Հայկյանների առասպելավանդության պատմական զարգացման փուլերի խնդրին նվիրված աշխատության մեջ, նա սեպագրական աղբյուրների լույսի ներքո, մի շարք նոր հիմնավորումներով ամրապնդել է նշված առասպելի իսկատիպ բնույթը և առաջարկել նրա՝ ժամանակի ընթացքում մաս-

նակի փոխակերպման նոր մոդել (Թեգարամա – «Տուն Թորգոմայ» երկրի, որպես Հայկի և Հայկյանների չվակետի փոխարինումն առասպելում Բաբելոնով՝ Աստվածաշնչի ազդեցության ներքո), որի ընդունմամբ մեծապես ավելանում է առասպելի ընդհանուր համապատասխանությունը բուն պատմական գործընթացին (Երևան, 1992):

Գ.Սարգսյանի գիտահետազոտական հետաքրքրությունների շարքում առանձնակի տեղ էր զբաղեցնում Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Սույն խնդիրն իր խոր ու ծավալուն հարցադրումներով տևականորեն, գիտական գործունեության ամբողջ ընթացքում զբաղեցրել է նրան և քննարկվել նրա երեք մենագրություններում և տասնյակ հոդվածներում:

Հենց սկզբից, Խորենացու երկը Գ.Սարգսյանը դիտարկել է ավանդական խորենացիագիտության համար անսովոր հայեցակետերից, ջանալով առաջին հերթին մտնել Պատմահոր ստեղծագործական աշխարհը, աշխատանոցը: Այսպես, առժամանակ մի կողմ դնելով նրա՝ աղբյուրներին արած բազմաքանակ հղումները, գիտնականը անմիջականորեն դիմել է «Պատմության» բուն տեքստից նրա բազմաբնույթ աղբյուրների և նրանցից Խորենացու ստացած նպաստի ճանաչմանը: Նա պարզել է, որ արտաքին գրավոր աղբյուրները (Աստվածաշունչ, Եվսեբիոս Կեսարացի և այլն), օժանդակելով Խորենացուն համաշխարհային պատմության լայն հետևախորքի վրա իր ժողովրդի պատմության դիտարկմանը, բուն Հայաստանի համար շատ քիչ բան են տվել: Գ.Սարգսյանը պարզել է նաև Պատմահոր ներքին, նախամաշտոցյան գրավոր հանրահայտ աղբյուրների (Մար Աբաս Կատինայի և, ըստ Մ.Աբեղյանի՝ «Հյուսումն պիտոյից» մատյանի) կողքին իր կարևորագույն տեղն ունի Օդյումպ քուրմի «Մեհենական պատմությունը»: Բանավոր աղբյուրների (առասպելների, ավանդությունների, ասքերի, երգերի) կողքին առանձնացրել է նյութական աղբյուրներից (հուշարձանների, քաղաքների, ամրոցների, ջրանցքների, ավերակների դիտարկումներից ու մտովի վերականգնումից) ստացած տեղեկությունների տեղը, պարզաբանել Խորենացու լեզվական աղբյուրների՝ հատուկ անունների ստուգաբանությունների, ինչպես և «գրական» աղբյուրների՝ իրեն դուր եկած այլևայլ մատյաններից փոխառած «ոճական նյութի»՝ առանձին արտահայտությունների, նախադասությունների ու հատվածների տեղն ու դերը:

Գ.Սարգսյանի հաջորդ քայլը դեպի Պատմահոր աշխատանոցի ընդերքը եղել է այն հարցադրման պատասխանը, թե աղբյուրների

այս ճոխ ներկայակայից (որը հեղինակն իրավացիորեն համեմատում է արդի պատմաբանի աղբյուրային լայն բազայի հետ) ստացած խայտաբղետ և, անշուշտ, հաճախ նաև իրարամերժ տեղեկություններից ինչպե՞ս է Խորենացին կերտել իր «պերճ ու ողորկ» (Պատմահոր բառերն են հունական առասպելների մասին), ներքին հակասություններից լիովին զուրկ «Պատմությունը»:

Գարձյալ դիմելով բուն տեքստի քննությանը, Գ.Սարգսյանը հայտնաբերել է ժողովված տվյալների մշակման երկու աստիճան կամ փուլ: Առաջին փուլում, իր չափանիշների կիրառմամբ, Խորենացին նյութը բաժանել է պիտանի (անհրաժեշտ), մասամբ պիտանի և ոչ պիտանի մասերի: Սրանցից երրորդը նա անտեսել է, իսկ երկրորդը՝ «նշարտեցրել» (Պատմահոր՝ առասպելներից բանականը գտելու մեթոդին տված Մ.Աբեղյանի հաջող բնորոշմամբ): Այս փուլում վերանում էր նյութի ներքին հակասականությունը:

Երկրորդ փուլը, ըստ Գ.Սարգսյանի, եղել է զտված նյութը մեծ և փոքր համակարգերի մեջ միավորումը: Համակարգը ստեղծվել է ըստ նախապես կազմված ծրագրի: Այսպես, նախարարական տների պատմությունը գրվել է ըստ հարցաթերթիկի, որը պարունակել է մոտավորապես այսպիսի կետեր. տոհմի ծագումը, նրա «նախարարացումը», գրաված դիրքը (արքունիքում, արքունի ծառայության մեջ), տոհմի ներկայացուցիչների բարի և չար գործերը, ապա և տոհմի անկումը: Խորենացին լրացրել է այն իր «Պատմության» մեջ գործող նախարարական 50 տոհմից յուրաքանչյուրի համար, իհարկե, ըստ տվյալների ընձեռած հնարավորության, և գետեղել ստացված համակարգված նյութը «Պատմության» մեջ, ըստ ժամանակագրության:

Գ.Սարգսյանի ապացույցներով՝ նմանօրինակ ձևով է ստեղծվել և «Պատմության» 2-րդ և 3-րդ գրքերն ընդգրկող ժամանակագրական համակարգը: Խորենացու ժամանակագրական երկու տեսակի տվյալները (քացարձակ՝ «այսինչ արքան գահավորել է այսքան տարի» և հարաբերական՝ «այսինչ արքան գահակալել է այսինչ օտար թագավորի այնինչ տարվանից մինչև այնինչ տարին») ցրված են «Պատմության» II և III գրքերի ողջ շարադրանքով մեկ: Հավաքելով և դասավորելով դրանք՝ ստացվում է սլացիկ, միասնական համաժամանակյա ժամանակագրական համակարգ, այսպես կոչված՝ կանոն («Մովսես Խորենացու ժամանակագրական համակարգը», Երևան, 1965), որը և կազմում է «Պատմության» ողնաշարը: Ըստ Գ.Սարգսյանի, համակարգ են կազմում նաև Խորենացու՝ հատուկ անունների

(տոհմանուններ, անձնանուններ, տեղանուններ) ժողովրդական ստուգաբանությունները:

Անդրադառնալով Խորենացու երկում իր աղբյուրների բազմաքանակ հղումներին, որոնց վրա երկար և հաճախ անպտուղ տքնել են խորենացիագետները, Գ.Սարգսյանը չի կասկածում, ու մասամբ նաև հիմնավորում է, որ դրանք համակարգի ձևով պատկերացվելու դեպքում էական չափով իրենց բացատրությունը կստանան:

Ի դեպ, չի շրջանցվել նաև խորենացիագիտության առանցքային համարվող առեղծվածը՝ Պատմահոր ապրելու ժամանակի խնդիրը, որպես կարևոր փաստարկ նրա՝ 5-րդ դարին պատկանելու տեսակետներին, բերելով Դավիթ Անհաղթի քաղումը Խորենացուց:

Ահա, ըստ Գ.Սարգսյանի նշված և ուրիշ համակարգերը միավորվելով և սերտաճելով մեկ գերհամակարգի, տվել են «Հայոց պատմություն» կոչվող միակտուր կոթողը (Զլիվենո, 1992):

«Հայոց պատմության» բազմաթիվ շեղումները մեր իմացած հավաստի պատմությունից Գ.Սարգսյանը բացատրում էր Պատմահոր՝ հունա-հռոմեական պատմագրության դասական գործերին (Հերոդոտոս, Քսենոփոն, Ստրաբոն, Տակիտոս, Պլուտարքոս, Դիոն, Ապիանոս, Ամիանոս) անձանոթ լինելու հանգամանքով: Միևնույն ժամանակ նա ցույց է տալիս նաև, որ իր ձեռքի տակ եղած նյութի հիման վրա Խորենացին պահպանել է ահռելի քանակությամբ հավաստի տվյալներ հայոց հնագույն պատմության, երկրի ներքին կյանքի, հեթանոսական կրոնի, բանահյուսության, պատմության պարբերացման ու ժամանակագրության, պատմագրության, այլև հարևան և հեռավոր երկրների մասին (Երևան, 1991):

Իհարկե, այս ուղղությամբ Գ.Սարգսյանից առաջ էլ շատ մեծ աշխատանք է կատարվել, սակայն նրա բերած սկզբունքային նորությունն այլ է: «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» իր մենագրության մեջ նա, անդրադառնալով Խորենացուց 3,5 և ավելի հարյուրամյակ առաջ տեղի ունեցածի՝ Պատմահորը և, ընդհանրապես միջնադարյան պատմագրությանը հասնելու ճանապարհների խնդրին, էական քայլ է արել հայտնաբերելու այդ տեղեկատվության հոսքի, բացի ժողովրդի հիշողությունից և բանահյուսությունից, նաև իրական գրավոր ուղիները, մի շարք համոզիչ փաստերով ցուցադրելով հիշյալ խնդրում Հայաստանի հեթանոսական մեհյանների, քրմության դերը: Այսպես, օրինակ, նրան հաջողվել է ցույց տալ, որ այդ ճանապարհով, մեհյաններում իրականացվող արքայական դիմաստիայի պաշտամունքի բերմամբ, նրանց ար-

խիվներում պահպանվել են և Խորենացու միջնորդությամբ մեզ են հասել ոչ միայն հայոց թագավորների մասին նյութեր, այլև Պարթև Արշակունիների՝ գ իտությանը հայտնի առավել հավաստի արքայացանկը: Նման գրավոր ուղիների բացահայտումն է, որ թույլ է տալիս Խորենացու ակներևաբար հավաստի տեղեկությունները համարել ոչ թե պատահական զուգադիպություն, այլ օրինաչափ երևույթ:

Չենք կարող շրջանցել նաև Գ.Սարգսյանի բանավիճային անդրադարձը՝ «Հայոց պատմության» 19-րդ դարավերջից ծագած և շիկացած, այնուհետև ննջող գերբնադատությունը՝ այդ երկրի անգլերեն թարգմանության հեղինակ պրոֆ. Ռ.Թոմսոնի կողմից մեր ժամանակներում վերակենդանացնելու կապակցությամբ: Իր գլխավոր փաստարկումները Գ.Սարգսյանն ուղղել է գերբնադատների այն ամենահիմնական կետի դեմ, ըստ որի «Հայոց պատմությունը» պիտանի չէ որպես պատմական աղբյուր (Երևան, 1991): Մյուս կողմից՝ նա անդրադարձել է նաև մեր օրերում մոդայիկ դարձած Խորենացու երկի թերբնադատությանը, պարզապես միջնադարին հատուկ անբբնադատ ընկալմանը, որը, յուրովի, ոչ պակաս չափով է խաթարում Պատմահոր վարկը, քան գերբնադատությունը (Երևան, 1986, 1991):

Գ.Սարգսյանի խորենացիագիտական աշխատությունների հրապարակ գալը պատմագիտական այնպիսի վերընթաց քայլ էր, որ իրենով նշանավորեց Մովսես Խորենացու և նրա «Հայոց պատմության» հետ կապված պրոբլեմների ուսումնասիրման մի նոր ու բարձր աստիճան:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերաբերյալ Գ.Սարգսյանի ստեղծած ինքնատիպ հղացքը ամենասեղմ կերպով շարադրված է նրա՝ 1991թ. Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյակի կապակցությամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով հրատարակված փոքրիկ մենագրության մեջ:

Նույն կապակցությամբ, Հ.Էմինի թարգմանությունից 100 տարի անց, յույս տեսավ նաև «Հայոց պատմության» Գ.Սարգսյանի ռուսերեն նոր թարգմանությունը: Աշխատանքը կատարվել է Պատմահոր օգտագործած բառագանձի, տերմինների ու արտահայտությունների համաբարբառային հետազոտության, ըստ էության ըմբռնելու, դրանց ճշգրիտ իմաստը բացահայտելու եղանակով: Թարգմանությունն աչքի է ընկնում և՛ գրաբար բնագրին իր հարազատությամբ, և՛ ռուսերեն ընտիր լեզվով:

Խորենացին հանգիստ չէր տալիս Գ.Սարգսյանին: Կյանքի վա-

դաժամ ավարտից քիչ առաջ նա հրապարակեց «Մովսես Խորենացու Ողբը նոր մեկնաբանությամբ» հոդվածը, որտեղ ցույց է տրված. որ Ողբը, նրա երկրորդ մասը, ոչ թե հռոի իրականության վշաահար հոգու տված գնահատականն է, ինչպես բոլորը համոզված են եղել, այլ ժամանակի ոգով շարադրված և այլ գրականություններում իր գուգահեռներն ունեցող մարգարեություն, վախճանաբանական գուշակություն:

Ակադեմիկոս Գագիկ Սարգսյանն ուներ գիտնականի իր կայուն սկզբունքները, որոնք պահպանում էր սրբորեն: Նա մշտապես հաշվի էր նստում, իր հետազոտությունների հիմքում դնում պատմական վկայությունները, փաստերը և դրանց հիման վրա եզրահանգումներ կատարում: Նա մշտապես հակադրվել և հակադրվում էր գիտության մեջ պարզունակությանը, մակերեսայնությանը, մանավանդ, գավառականությանը՝ գիտելիքի պակասը «հայրենասիրությամբ» լրացնելուն: Գիտական բանավեճերում իր համոզմունքները պաշտպանելու ժամանակ Գ.Սարգսյանը երբեք գիտության խնդիրները չէր գոհաբերում թեկուզև այդ պահին ոգեշունչ ժողովրդականություն վայելող որևէ կողմնակի նկատառման:

Որպես հայագետ և ասորագետ Գ.Սարգսյանը քաջ հայտնի է արևելագիտական լայն շրջաններում: Ձեկուցումներով նա մասնակցել է միջազգային բազմաթիվ գիտաժողովների՝ իր գույգ մասնագիտությունների գծով: Երևանում նա կազմակերպել է անտիկ շրջանի մասնագետների «Էյրենե» միջազգային ընկերության համաժողովը (1976) և Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակի հանդիսավոր տոնակատարությունն ու միջազգային գիտաժողովը (1991):

Գերմանիայի մասնագետների հետ համատեղ Գ.Սարգսյանը երկար տարիներ աշխատում էր «Հելլենիստական Բաբելոնիայի սոցիալ-տնտեսական պատմության սեպագրական աղբյուրներ» եռահատոր դիվանի վրա:

Վերլուծական խորքով և գնահատության պատրաստականությամբ են առանձնանում ակադ. Գ.Սարգսյանի ընդգրկուն, կողմնորոշող գրախոսականներն ակադ. Հ.Մանանդյանի՝ Հին Հայաստանի քաղաքներին և առևտրին նվիրված մենագրության երկրորդ հրատարակության («Вестник древней истории», 1957, № 4), ակադեմիկոս Ա.Տյունենևի՝ Շումերի պետական տնտեսությանը նվիրված սովորածավալ մենագրության («Вопросы истории», 1958, № 4), Ա.Նովոսելցևի՝ Անդրկովկասի երկրներում ֆեոդալիզմի առաջացմանը վերա-

բերող մենագրության («Вопросы истории», 1983, № 7), ինչպես և «Համաշխարհային պատմության» 1-2 հատորների («Вопросы истории», 1958, № 6), և «Հին աշխարհի պատմություն» եռհատորյանի («Народы Азии и Африки», 1984, № 4) վերաբերյալ:

Գ.Սարգսյանը խմբագրել և հրատարակության է պատրաստել մի շարք երևելի հայագետների՝ Ն.Ադոնցի, Հ.Մանանդյանի, Ստ.Մալխասյանցի, Թադ.Ավդալբեգյանի, Ե.Տեր-Սիմասյանի, Գ.Ջահուկյանի և այլոց աշխատությունները, վճռորոշ մասնակցություն է ունեցել ընդհանրացնող աշխատությունների ստեղծմանը: Նա «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի ակադեմիական հրատարակության առաջին հատորի խմբագրի տեղակալն է և հելլենիստական ժամանակաշրջանի բաժնի, ինչպես և հայ ժողովրդի պատմության մեկ հատորյակների, դպրոցական դասագրքերի հին շրջանի գլուխների հեղինակը:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում նրա՝ շուրջ քառորդ դարյա տնօրինության օրոք հաստատությունը, ինչպես և հայ արևելագիտությունը ապրեցին ծրագրված զարգացում: Գ.Սարգսյանը կազմավորել է մի շարք գիտական նոր ուղղություններ՝ Հին Արևելքի (այժմ՝ Սեպագրական քաղաքակրթությունների), Կովկասի և Բյուզանդիայի (այժմ՝ Քրիստոնյա Արևելքի) և Արևելյան աղբյուրագիտության բաժինները: Նրա օրոք հիմնադրվել է ինստիտուտի երեք նոր մատենաշար՝ «Հին Արևելք», «Կովկաս և Բյուզանդիա», «Արևելյան աղբյուրագիտություն», ինչպես և «Խոռոհներ և ուրարտացիներ» մենագրությունների մատենաշարը: Ինստիտուտն այդ շրջանում ձեռք բերեց միջազգային համարում, համալրվեց մի քանի տասնյակ երիտասարդ որակյալ մասնագետներով, որոնց մեծ մասը հմտացել է Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի և Թբիլիսիի արևելագիտական կենտրոններում, ձեռք բերել երկրագիտական և լեզվական (եվրոպական և արևելյան) լավ պատրաստություն: Գ.Սարգսյանի օրով ու քաջալերանքով ստեղծվեց հայկական արևելագիտական դպրոց, որի շատ ներկայացուցիչներ այսօր էլ հաջողությամբ կրում են իրենց մասնագիտական բեռը, ոմանք էլ համալրել են Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, ինչպես և հայ դիվանագիտության անձնակազմը:

Գ.Սարգսյանի գիտական ղեկավարության ներքո գրվել ու պաշտպանվել են տասնյակից ավելի ատենախոսություններ: Ծավալուն և արդյունավետ է եղել նրա դասախոսական գործունեությունը: Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետում

դասավանդել է ասուրագիտական առարկաներ և աքքադերեն (ասուրա-բաբելոներեն) լեզուն, Պատմության ֆակուլտետում վարել է «Հին հայկական պետականության պատմություն» և «Հելլենիզմը Հայաստանում» հատուկ դասընթացները: Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում նա դասավանդել է Հին աշխարհի և Հայաստանի պատմություն:

Պատմաբան Գ.Սարգսյանի բանասիրական-լեզվական հիմնավոր պատրաստությունը միաձուլվում էր երևույթները կուռ արամաբանական հիմքի վրա վերլուծելու ի վերուստ տրված անուրանալի տաղանդի հետ: Այդ ամենին եթե ավելացնենք Հին Հայաստանի և Հին Արևելքի պատմության ասպարեզում խոր ու լայն պատրաստությունը, ապա հասկանալի կդառնա, թե ինչու գիտական հասարակայնությունը նրանից մշտապես նոր ծանրակշիռ ներդրումներ էր ակնկալում:

Գագիկ Խորենի Սարգսյանը վախճանվեց 1998թ. օգոստոսի 25-ին: Նրա աշխատությունները երկար ժամանակ կմնան որպես հայագիտության և արևելագիտության ճշմարիտ նվաճումներ և իրենց հեղինակին կապահովեն XX դարի երկրորդ կեսի խոշորագույն հայագետներից մեկը լինելու անվիճելի պատիվը:


Ակադ. Վ. ԲԱՐԽՈՒԳԱՐՅԱՆ
Պրոֆ. Պ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

A II
91011

Գ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՍՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հազվադեպ է լինում, որ երիտասարդ գիտնականը գիտության ոլորտ մտնի միաժամանակ երկու իրարից շատ հեռու բնագավառներում և երկուսում էլ հասնելով ակնառու հաջողությունների, իր ողջ կյանքի ընթացքում հավատարիմ մնա ընտրված ուղղություններին: 50-ական թթ. հանդես են գալիս Գագիկ Սարգսյանի առաջին հրապարակումները՝ ասուրագիտության և հայագիտության գծով, և միայն քառասուն տարի անց է, որ ասուրագետը և հայագետը հանդիպում են, որպեսզի մանրակրկիտ հետազոտության ենթարկեն սելևկյան շրջանի աստղաբաշխական մի օրագիր՝ գրված բաբելոնյան սեպագրով՝ Հին Հայաստանի թագավորական դինաստիայի տոհմաձառը վերականգնելու նպատակով (տե՛ս Archaeologische Mitteilungen aus Iran, Bd. 27, 1994, S. 237-239): Կարելի է ավելացնել նաև, որ ասուրագետների ուշադրությունից չի վրիպել Գ.Սարգսյանի իրականացրած՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ռուսերեն հոյակապ թարգմանությունը (Երևան, 1990):

Գ.Սարգսյանի ասուրագիտական վաղ հրապարակումների թվում հատուկ տեղ ունի “Частные клинописные контракты селевкидского времени из собрания Государственного Эрмитажа” (Вестник древней истории, 1955, № 4, с. 136-170) աշխատությունը: Այստեղ, ինչպես և նրա հետագա հրապարակումներում, տեքստերը ներկայացված են սեպագրական նշանների գրչագիր ընդօրինակմամբ, տառադարձմամբ, թարգմանությամբ և ծանոթագրություններով: Այն տարիներին դա ռահվիրայի աշխատանք էր, քանի որ այդպիսի տեքստերի միայն սահմանափակ քանակություն էր հայտնի, նրանց բառագանձը հաշվի չէր առնվում արքադերեհի այն ժամանակվա բառարաններում ու նաև այդ լեզվի՝ սեպագրական վավերագրերի համար կիրառված ուշ բաբելոնյան բարբառի առանձնահատկությունները մնում էին դեռևս չպարզված: Ընդ որում, Գ.Սարգսյանից բացի, Ռուսաստանում կամ ԽՍՀՄ-ում ոչ ոք չէր զբաղվում սելևկյան շրջանի բաբելոնյան տեքստերով, և նա



ստիպված էր այդ բնագավառում ինքնուսի դժվարին ճանապարհ անցնել: Այսուհանդերձ, նրա հրապարակումը օրինակելի էր և մտավ ասուրագիտության ոսկե ֆոնդի մեջ, պարզ ելելով հեղինակին համաշխարհային ճանաչում գտած խոշոր ասուրագետի համարում: Մեպագրական տեքստերի օրինակելի հրապարակողի նրա այդ համարումը իր հաստատումը գտավ 1975 և 1977 թթ.՝ Բեռլինի Առաջավորասիական թանգարանի հելլենիստական դարաշրջանի բաբելոնյան սեպագրական վավերագրերի, ինչպես և Հայաստանում հնագիտական պեղումների ժամանակ գտնված հին բաբելոնյան մի տեքստի նորանոր հրապարակումների մեջ: Հետազոտական նպատակներով Գ.Սարգսյանին են տրամադրվել Չիկագոյի համալսարանի արևելյան ինստիտուտում պահպանվող հելլենիստական դարաշրջանի բաբելոնյան սեպագրական վավերագրերի լուսանկարները, որոնցից երկուսը նա հրապարակեց տառադարձությամբ և թարգմանությամբ (տե՛ս «Древний Восток», 5, 1988):

Գ.Սարգսյանին հետաքրքրել է այն ամենը, ինչ վերաբերում է հելլենիստական Բաբելոնիային. քաղաքների կարգավիճակը և քաղաքային վարչության կառուցվածքը, սեպագրական տեքստերում վկայված հունական օնոմաստիկան, նյութական բարիքների տաճարային բաշխումները, ստրկատիրության պրոբլեմը, ամենատարբեր սոցիալական հաստատությունները և մշակութային պրոբլեմները, հատկապես՝ բաբելոնյան ավանդական և Միջագետքը նվաճողների հին հունական մշակույթի փոխթափանցումը: Մ.թ.ա. առաջին հազարամյակի վերջին հարյուրամյակների Բաբելոնիայի սոցիալական պատմության, տնտեսության և մշակույթի բոլոր այս ասպեկտներն իրենց փայլուն դիտարկումն ու մանրակրկիտ հետազոտությունն են գտել Գ.Սարգսյանի տասնյակ աշխատություններում:

Պատկառելի է նաև Գ.Սարգսյանի վաստակը կադրերի պատրաստման բնագավառում: Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում նրա տնօրինության օրոք ստեղծվել է Հին Արևելքի (այժմ՝ Մեպագրական քաղաքակրթությունների) բաժին, որը համալրվեց Հին Արևելքի գրեթե բոլոր տարածաշրջանների մասնագետներով: Գ.Սարգսյանի նախածեռնությամբ նրանցից շատերը իրենց ասպիրանտական պատրաստությունն են ստացել այն ժամանակվա ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքում (այժմ՝ ՌԳԱ Արևելագիտության ինստիտուտի Սանկտ-Պետերբուրգյան բաժանմունք):

Գ.Սարգսյանի վերջին ասուրագիտական հոդվածները (ասուրա-

գետներ Հ.Կլեմգելի և Ի.Օլսների հոբեյանական ժողովածուներում) համոզմունք էին ներշնչում, որ նրա գործունեությունը՝ հայագիտությանը զուգահեռ, կշարունակվի նաև այդ ասպարեզում և կտա նորանոր նշանակալից արդյունքներ: Մակայն ավաղ...

Ռ.Գ.Ա քրթակից անդամ **Մ. Ա. ԳԱՆԳԱՄԱՆԿ**

АКАДЕМИК ГАГИК САРКИСЯН

Академик Гагик Хоренович Саркисян родился 6 апреля 1926г. в Ереване, в семье видного литературоведа проф. Хорена Сергеевича Саркисяна. Окончил Ереванскую среднюю армянскую школу им. Н.К.Крупской (ныне им. Н.Агбальяна). В 1946-1950гг. учился на Историческом факультете Ленинградского (ныне Санкт-Петербургского) государственного университета, специализировался на античной истории на кафедре Истории древнего мира. Изучал древнегреческий и латинский языки. Здесь его учителями были академик В.В.Струве, профессор С.И.Ковалев, проф. К.М.Колобова и др. Параллельно, на восточном факультете, он посещал лекции по ассириологическим дисциплинам и проходил аккадский (ассиро-вавилонский) и урартский языки у крупного востоковеда И.М.Дьяконова. Под его же руководством он написал дипломную работу “Город и храм эллинистической Вавилонии” на основе неизданных вавилонских клинописных документов, хранящихся в Государственном Эрмитаже. Эта работа, а также соответствующая коллекция клинописных табличек были затем опубликованы на страницах “Вестника древней истории” в 1952, 1953, 1955 гг.

В 1951-1954 гг. Г.Х.Саркисян проходил аспирантуру в Ленинградском (ныне Санкт-Петербургском) отделении Института истории АН СССР под научным руководством проф. М.Е.Сергеенко. В 1954г. успешно защитив кандидатскую диссертацию под заглавием “Город древней Армении”, вернулся в Ереван и поступил на работу в Институт истории АН АрмССР младшим научным сотрудником (с 1956г. — старший).

Дальнейшие вехи продвижения Г.Х.Саркисяна: ученый секретарь Отделения общественных наук АН АрмССР (1956-1962), заместитель директора по науке Института истории той же академии (до 1966г.), заведующий созданным им Отделом древней истории (до 1971г.), первый директор новосозданного Института востоковедения АН АрмССР (до 1994г.), вице-президент Акаде-

мии наук АрмССР (1988-1990), вновь вице-президент, академик-секретарь отделения гуманитарных наук той же академии (1995-1998).

Г.Х.Саркисян доктор исторических наук с 1967г., профессор с 1981г. В 1974г. он был избран членом-корреспондентом АН АрмССР, в 1986г. — академиком.

Г.Х.Саркисян возглавлял также Отдел клинописных цивилизаций Института востоковедения НАН РА, являлся председателем ученого совета по защите диссертаций того же института, членом ученых советов Института истории, Института археологии и этнографии НАН РА, Матенадарана им. Маштоца, других научно-исследовательских учреждений. Член редакционных коллегий “Историко-филологического журнала” (Ереван), “Вестника древней истории” (Москва), председатель общества “Армения—Греция”, почетный член Сирийского общества истории науки. Был председателем армянского отделения Ассоциации востоковедов СССР.

Научная деятельность Г.Х.Саркисяна протекала в двух направлениях — арменоведения и ассириологии. Следует отметить его постоянное стремление к рассмотрению конкретных исторических вопросов на широком историческом фоне. Такой подход обнаруживается с самых первых его шагов в области арменоведения. Так, интерес Г.Х.Саркисяна к городу древней Армении был связан непосредственно с его исследованиями по греческим полисам эллинистического времени, как и по им же открытой “гражданско-храмовой общине” Вавилонии того же периода. Именно их параллельное рассмотрение дало возможность ученому правильно оценить дошедшие до нас очень скудные данные по городу древней Армении.

В своей первой монографии “Тигранакерт. Из истории древнеармянских городских общин” (Москва, 1960) ему удалось показать, что города древней Армении представляли собой одну из разновидностей полуавтономных городских общин, свойственных эллинистическому периоду.

В упомянутой монографии уже затронута также проблема социально-экономического строя древней Армении. В ряде статей и в монографии “О путях социально-экономического развития древней Армении” (Ереван, 1962) он попытался найти решение этой труднейшей спорной проблемы, определив для Армении в

системе рабовладельческих обществ древнего мира специфическое место, характеризующееся большими отличиями от классического рабовладения античных обществ. Так, например, в статьях, посвященных дастакертам-агаракам (Ереван, 1962, Париж, 1968), он показал, что статус рабов-“мшаков” древней Армении был весьма близок к статусу крепостного.

Результаты исследований Г.Х.Саркисяна в области политической истории древней Армении изложены в ряде его статей (Ереван, 1965, 1966, 1971, 1981), как и первом томе восьмитомника “История армянского народа”, в принадлежащем его перу обширном разделе “Армения в эллинистическую эпоху” (Ереван, 1971). Из разработанных им вопросов следует отметить три. При скрупулезном рассмотрении греко-римских источников он сумел прояснить представления об исключительно сложном положении Армении на грани III- II вв. до н.э., когда составлявшие Армению четыре царства – Великая Армения, Малая Армения, Софена и Коммагена, в которой также правила ветвь армянской династии Ерундакан, – боролись с Селевкидами за свою независимость. Г.Х.Саркисян раскрыл сходство и различия в судьбе этих четырех государственных образований (Ереван, 1969).

Другой вопрос относится к первой половине II в. до н.э. Г.Х.Саркисяну удалось подвергнуть коренному пересмотру и заново осветить этот исторический период, как и деятельность его “героя” – армянского царя Арташеса I. Последний предстал как один из крупнейших деятелей армянской истории, полководец и реформатор, при котором Армения пережила исторические процессы объединения земель, создание крупного государства с международным престижем, упорядочения экономического и административного строя, крутого подъема авторитета царской власти, основания новой столицы Арташат и т.п. Такая оценка деятельности Арташеса I раскрывает также предпосылки крупных успехов его внука – Тиграна II.

Третий вопрос очень характерен для Г.Х.Саркисяна как арменоведа-ассириолога. Ему удалось решить загадку, связанную с причинами следовавших одно за другим восстаний трех сыновей Тиграна II против своего отца. Для этого им был привлечен совершенно неожиданный источник – вавилонский клинописный астрономический дневник эллинистического времени, в который, по существовавшему обычаю, вкраплена краткая хроника совре-

менных событий. Здесь упоминается сын Тиграна Великого Тигран Младший. Этим была также открыта интересная страница армяно-вавилонских отношений этого позднего периода (Ереван, 1991; Берлин, 1994).

Существенны заслуги Г.Х.Саркисяна также в исследовании иноязычной эпиграфики Армении — арамейских надписей Арташеса I, греческих надписей Гарни и Тигранакерта (Ереван, 1956; Москва, 1966, 1981).

В сфере интересов ученого находятся также проблемы армянской культуры, в частности — вопросы истории дохристианской духовной культуры и языка. Таковы его труды, посвященные обнаружению и исследованию института обожествления и культа царей (и цариц) и их предков, принятых в Армении по примеру крупных эллинистических государств (и имевших, разумеется, также этнографические корни) (Москва, 1960, 1966, Ереван, 1968).

Далее, собрав воедино скудные данные античных и раннесредневековых армянских источников, Г.Х.Саркисян сумел обрисовать целую цепочку существовавшей на почве Армении в домесроповский период грекоязычной историографии, которая тянулась со времен Тиграна II (I в. до н.э.) до IV в. Она, по убеждению ученого, послужила одной из предпосылок и факторов возникновения и пышного расцвета армянской национальной историографии V века, золотого века армянской культуры (Ереван, 1969).

Г.Х.Саркисян затрагивает также проблемы языкознания. Обращаясь к вызывающему споры вопросу о причинах и предпосылках взрывоподобного расцвета армянской литературы в V в., он предложил концепцию существования в Армении предшествующего периода системы иноязычного (по предложенному им термину — гетерозепического) преподнесения христианского вероучения, при котором греческие или сирийские тексты проповедник преподносил непосредственно в устном переводе на армянский язык. Такая форма проповедования долгое время обслуживала миссионеров, а затем и церковь и, по мнению ученого, с одной стороны, существенно облегчила дело письменных переводчиков V в. созданием соответствующей армянской терминологии, а с другой — в определенной степени тормозила создание армянских письмен в пе-

риод до Месропа Маштоца (Ереван, 1978, 1990; Гейдельберг, 1993).

Не обойдена Г.Х.Саркисяном также проблема образования армянского народа и формирования армянской государственности. В работе “Урартская держава и армяне” (Ереван, 1988) он, четко различая феномены происхождения образования народа, старался установить хронологические и географические рамки передвижения этнических групп, причастных к процессу народообразования армян, по возможности выяснить характер и конкретные проявления их исторического взаимодействия. В частности, он сделал научную попытку прояснить характер и ход распространения армянского этнического элемента по Армянскому нагорью до сложения Урартской державы, во время ее существования и в период после ее падения, вплоть до времени окончания процесса образования армянского народа и образования первого общеармянского государства.

В следующих работах, посвященных этапам исторического развития сохранившейся в “Истории Армении” Мовсеса Хоренаци легенды-предания о Гайке и Гайкидах, он, в свете данных клинописных источников, дополнил рядом новых аргументов мнение об аутентичности указанной легенды и предложил новую модель ее частичного преобразования в течение времени. (Замена в легенде страны Тегарамы — “Дома Торгома” в качестве исходного пункта движения Гайка и Гайкидов — Вавилоном, под влиянием Библии). Признанием этой модели существенно вырастает общее соответствие легенды подлинному историческому процессу (Ереван, 1992).

В спектре научных интересов Г.Х.Саркисяна исключительное место занимает “История Армении” отца армянской истории Мовсеса Хоренаци. Эта проблема в своей глубокой и широкой постановке длительно, в течение всей научной деятельности занимала его и обсуждалась в трех его монографиях и десятках статей.

С самого начала Г.Х.Саркисян рассматривал труд Мовсеса Хоренаци с необычной для традиционных исследований об “Истории Армении” точки зрения, стремясь в первую очередь проникнуть в творческий мир, лабораторию ее автора. Так, временно отложив в сторону многочисленные ссылки Мовсеса Хоренаци, он обратился к распознаванию его разнохарактерных источников и их вклада в “Историю” непосредственно из самого текста. Выясни-

лось, что внешние письменные источники (Библия, Евсевий Кесарийский и др.), помогая Хоренаци в рассмотрении истории своего народа на широком фоне всемирной истории, мало что внесли для истории самой Армении. Г.Х.Саркисян показал также, что наряду с общеизвестными местными письменными домесроповскими источниками (Мар Абас Катина, согласно М.Абегяну, — книга “Сплетение полезностей”) важнейшее место принадлежит “Храмовой истории” жреца Олюмпа. Наряду с устными источниками (легендами, преданиями, сагами, песнями) он выделил роль материальных источников (изученных и мысленно восстановленных Мовсесом Хоренаци остатков и руин памятников, городов, крепостей, храмов, каналов и т.п.) в изложении “Истории”, выяснил роль языковых источников — часто применяемой Хоренаци этимологии собственных имен, как и роль и место “литературных” источников — стилистического материала, а именно отдельных выражений, отрывков и фраз, почерпнутых историком из приглянувшихся ему трудов.

Следующим шагом Г.Х.Саркисяна в недра творческой лаборатории Мовсеса Хоренаци был ответ на вопрос о том, каким именно образом на основании полученных из столь богатой источниковой палитры (которую Г.Х.Саркисян справедливо сравнивает с широкой источниковой базой современного историка) пестрых и, несомненно, нередко противоречивых сведений была создана столь “изящная и гладкая” (так характеризует Мовсес Хоренаци греческие легенды), полностью лишенная внутренних противоречий “История Армении”.

Опять-таки, обращаясь к самому ее тексту, Г.Х.Саркисян обнаружил две ступени или два этапа обработки собранных историком сведений. На первом этапе Хоренаци, согласно своим критериям, распределял материал на три группы — пригодный к использованию (достоверный), непригодный и частично пригодный. Вторую группу он игнорировал, а материал третьей, так сказать, “одостоверял” (удачное определение М.Абегяном способа извлечения Мовсесом Хоренаци рационального зерна из легенд). На этом этапе была ликвидирована внутренняя противоречивость материала. На втором этапе, по Г.Х.Саркисяну, происходило сведение уже отобранного материала в большие и малые системы. Системы создавались по предварительно составленной программе. Так, например, история нахарарских (феодалных) родов пи-

салась по вопроснику (анкете), который включал, примерно, такие вопросы: происхождение рода, его “нахараризация” (приобретение нахарарского статуса), занимаемое положение (при царском дворе, на царской службе), добрые и дурные деяния представителей рода, его угасание. Мовсес Хоренаци заполнял этот вопросник на каждый из действующих в “Истории Армении” 50 нахарарских родов, разумеется, в границах возможностей, предоставлявшихся имеющимися данными, а затем вводил этот сведенный в систему материалов в свою “Историю” по хронологическому принципу.

Г.Х.Саркисян доказал, что аналогичным способом создана и хронологическая система “Истории”, охватывающая ее II и III книги. По тексту рассыпаны хронологические данные двух родов — абсолютные (такой-то царь правил столько-то лет) и относительные (такой-то царь правил с такого-то по такой-то год царя соседней страны). Отобрав из текста и расположив эти данные в соответствующем порядке, мы получаем синхронистическую хронологическую систему, так называемый канон, который и составляет хребет “Истории Армении” (монография “Хронологическая система Мовсеса Хоренаци”, Ереван, 1965).

Согласно Г.Х.Саркисяну, аналогичную систему составляет также совокупность “народных” этимологий Хоренаци, охватывающая многие родовые имена, антропонимы и топонимы.

Обращаясь к многочисленным ссылкам на источники, содержащимся в “Истории” Хоренаци, над которыми корпели многие исследователи, Г.Х.Саркисян не сомневается, а частично и обосновывает, что в случае рассмотрения их в виде системы многие загадочные ссылки получают свое объяснение. Кстати, не обойдена им и полагающаяся осевой проблема Мовсеса Хоренаци, относительно времени его жизни. В качестве важного аргумента в пользу его принадлежности к Vв. он приводит факт текстуальной зависимости от него философа VIв. Давида Непобедимого (Ереван, 1979).

Итак, согласно Г.Х.Саркисяну, упомянутые выше и другие системы, сведенные и слитые в единую суперсистему, и дали монументальный памятник, именуемый “Историей Армении” Мовсеса Хоренаци (Кливленд, 1992).

Многочисленные отклонения “Истории” от известной нам научной истории Г.Х.Саркисян объясняет тем, что автор не был

знаком с классическими трудами греко-римских историков – Геродота, Ксенофона, Страбона, Тацита, Плутарха, Диона, Аппиана, Аммиана. Одновременно он показывает, что на основании имевшегося у него под рукой материала Мовсес Хоренаци сохранил громадное количество достоверных данных о древнейшей истории армян, о внутренней жизни страны, о ее языческой религии, фольклоре, периодизации истории и историографии, как и о соседних и далеких от Армении странах (Ереван, 1991).

Естественно, что в этом направлении большая работа проведена и до Г.Х.Саркисяна, однако привнесенное им принципиально новое заключается в ином. В монографии “Армения эпохи эллинизма и Мовсес Хоренаци” (Ереван, 1996) он обратившись к вопросу о путях дохождения до Мовсеса Хоренаци и вообще до средневековой историографии известий о событиях 3-5-вековой и большой давности, сделал существенный шаг по обнаружению возможности притока этой информации, помимо памяти народа и фольклора, также по письменным каналам, продемонстрировав на ряде убедительных фактов роль в этом языческих храмов, жречества Армении. Так, например, ему удалось показать, что именно этим путем, в связи со справлявшимся в храмах культом царской династии, в храмовых архивах сохранились и через посредство Мовсеса Хоренаци дошли до нас материалы не только об армянских царях, но и наиболее достоверный из известных науке список парфянских Аршакидов (Ереван, 1984). Именно раскрытие таких письменных каналов притока информации и дает право считать явное сходство многих сообщений Мовсеса Хоренаци с данными современных описываемым событиям источников не случайным совпадением, а закономерным явлением.

Нельзя обойти молчанием также полемический отклик Г.Х.Саркисяна по поводу воскрешения в наше время Р.Томсоном, автором отличного перевода “Истории Армении” на английский язык, гиперкритики, возникшей в конце XIX в. в отношении этого произведения и в дальнейшем приутихшей. Основную аргументацию Г.Х.Саркисян направил против важнейшего положения гиперкритиков, согласно которому “История Армении” непригодна в качестве исторического источника (Ереван, 1981, 1991). С другой стороны, он обратился и к ставшей модной в последние десятилетия гипокритике труда Хоренаци, к его попросту некритичному, свойственному средневековью восприятию, каковое, по-своему, не в меньшей сте-

пени, чем гиперкритика, дискредитирует отца армянской истории (Ереван, 1987).

Издание трудов Г.Х.Саркисяна, посвященных “Истории” Мовсеса Хоренаци, было существенным шагом в арменоведении, который ознаменовал собой новую и высокую ступень изучения проблем, связанных с этим трудом.

Созданная по поводу “Истории Армении” Г.Х.Саркисяном оригинальная концепция в самом сжатом изложении представлена в маленькой монографии, изданной в 1991г. на армянском, русском, английском языках в связи с празднованием 1500-летия со времени создания этого труда.

В этой же связи вышел в свет также перевод на русский язык “Истории Армении”, сделанный Г.Х.Саркисяном через 100 лет после перевода Н.Эмина. Работа выполнена на основании тотального изучения контекстов лексики, терминологии, выражений, применяемых Мовсесом Хоренаци, уточнения их конкретной сущности и смысла, отличается и верностью древнеармянскому оригиналу и отличным русским языком.

Мовсес Хоренаци не давал покоя Г.Х.Саркисяну. В 1997г. он опубликовал статью “Плач Мовсеса Хоренаци в новой интерпретации”, где он показывает, что знаменитый “Плач”, его вторая часть, является не горестным описанием печальной действительности, как все были убеждены, а пророчеством, предсказанием, изложенным в духе времени и имеющим свои параллели в других словесностях.

У академика Г.Х.Саркисяна свои устойчивые принципы труженика науки, каковых он скрупулезно придерживается. Это – уважение к историческому факту, свидетельству, как к основе научного исследования, его выводы всегда аргументированы проверенными фактами. Это – неприятие примитивности и поверхностности в научном исследовании, особенно же – провинциализма в науке, выступающего подчас в облики патриотизма. При защите своих научных убеждений в полемике он никогда не приносит их в жертву каким бы то ни было побочным соображениям, даже если бы они были связаны с воодушевляющими в данное время публику популярными лозунгами.

Как арменовед и ассириолог Г.Х.Саркисян хорошо известен в мире науки. Он неоднократно принимал участие своими докладами в многочисленных международных научных форумах по своим

двум специальностям. В Ереване он организовал два крупных международных форума — конференцию общества античников социалистических стран “Эйрене” (1976) и торжественное празднование 1500-летнего юбилея создания “Истории Армении” Мовсеса Хоренаци, включая международную конференцию.

Следует отметить также его масштабные ориентирующие рецензии на книги академика Я.А.Манандяна “О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (Вв. до н.э. — XV в. н.э.)”, изд. второе (“Вестник древней истории”, 1957, 4), академика А.И.Тюменева “Государственное хозяйство Шумера” (“Вопросы истории”, 1958, 4), монографию А.П.Новосельцева о происхождении феодализма в странах Закавказья (“Вопросы истории”, 1983, 7), как и на I и II тома “Всемирной истории” (“Вопросы истории”, 1958, 6), трехтомник “Истории древнего мира” (“Народы Азии и Африки”, 1984, 4) и др.

